

ԽԱՅԱԿԱՆ

ՅԵՐԱՅԱՆ
ՃՈՑԱՐԱՐՈՅՑՅ

Գիկն է 10 կ. Գառառնեքուրմ 12 կ. 1911, Շարախ, ՅՈՒԼԻՍԻ 23-ին. Թիֆլիս. №30.

...Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն




POTTER.

Я.К. БЫКОВА

—Ողորմութիւն արէք, պարոն, այս խեղճ հաշմանդամին, տնանկ ու քաղցածին,—ուսման կարօտին, անհող անջուր մնացածին.

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



«ԽԱՔԱԲԱԼԱ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

Բ Ա Ք Ա Բ Ա Լ Ա

VI

Տարի

ՄԱՔԱԲԱԼԱ

VI

Տարի

Երգիծաբանական-աստիճական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱՔԱԲ ԱՆՆԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և դժբիչ, անկեղծ և կեղծա- չոր գործիչ-կործիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ բերք բոլոր բնագիտության համար

«ԽԱՔԱԲԱԼԱ» շաբաթիկն ծիծաղեցնում է, շաբաթիկն էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերի ուզի: Հասցէն՝ Тифлисть Музейный пер., редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Ժամանակաւոր խմբագիր՝ Ս. Մուրայան

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » —

«ԽԱՔԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՆԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 »
Երեք ամիսը	3 » 50 կ.
Մէկ ամիսը	1 » 20 »

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք զլիւրկայր:

«ԽԱՔԱԲԱԼԱ»-Ի ՕՐԱՑՈՅՑԸ

1911 ՅՈՒԼԻՍ 31 օր

23

Суббота **ՀԱՐԱՐ** Ծաղատո
Լուսին 11

22 (կիր.) Անւանակոչութիւն աստղագէտին օրացոյցին, որ իրավիտանա լինի յառաջի կիւէն-տաց իւրոց, քանզի ազգային գործերով սաստիկ զբաղած լինելուն պատճառով, անցեալ և նախանցեալ շաբաթան օրացոյցսն ի մէջ կէս դի- շերին կօնֆիսկաւատ եղև ի պատշաճաւոր իշխա- նութենէ:

25 (բ. շ.) Տօն սրբոյն ծառայողաց ուպրա- ւայի, որք զան ի գործի առաւ. ժամը 11-ից և մինչև ժամը 1-ը մի մասն նոցա յաշտութեամբ և սղջ-առողջ 120 ճանճն որսան և զնան հանգր- տանան ի հազիւ փափկասուն օրիորդաց ուպրա- ւայի:

26 (դ. շ.) Ամէնպարծ պատկազրութեան Խա- տիսին մերոյ Ալեքսանդրէի: Շնորհաւորեմ ի մար- դամէջ մանկին նորա:

27 (դ. շ.) Չայսօր ուպրաւան պահանջեցի ի տրամաւայի վարչութենէն, զի նա ամեն առա- ւօտ վաքսով և մազով սրբեցի կօշիկս ծառայող- աց ուպրաւայի, հակառակ դէպքում տուգանեց- ցի 20,000 ռուբլաւ:

28 (կ. շ.) Տօն սրբոյն էքս-Շահին պարսից, որ ի մէջ երազէն իր փլաւ տեսնիցէ, սակայն ա- նխբաւ Աթաբար-խանն ու Եփրեմ գրաւ ոչ առա- ցին, ուստի և փլաւն կըմնայ ի գործադրութիւն յօբնականին Գենջեանի:

29 (ուրբ.) Եղանակի այսօր անձրեային ե- ղիցի և սրտիկներն փափկասունաց կամաց բա- խեցի, քանզի առևտուրն պուրբիին մրնչև երկոյ կանգ առնեցի:

Աստղագէտ—տօմարագէտ և օրացոյցագէտ
Փարմուզ

Կ Ա Ք Ա Բ Ա Լ Ա

Կարկատում են բոլոր մարդիկ,
Կարկատում են միշտ, անվերջ,
Կարկատում են տղայ, աղջիկ,
Կարկատում են դուրս ու մէջ:

Երբ տեսնում եմ սիրուն աչքեր,
Գեղեցիկ կուրծք, հաստ կոնքեր՝
Կարկատան է, ես ասում եմ,
Եւ անցնում եմ—անտարբեր:

Երբ ճառում է ըլօթ տիրացուն
Ճիգիտական իր խղճով,
Կամ թշուառ միշտ օրն ի բուն
Աղօթք կարդում երկիրով:

Երբ ասում են ազգասէրը—
Հայ է, նոյն իսկ ջննտրվէն,
Երբ պնդում են կոյսի սէրը
Նիւթ չէ երբէք—հողեղէն:

Երբ թնդում է ազնուծիւն,
Մեծ գաղափար, իղէալներ,
Կամ քարոզում սէր, սրբութիւն՝
Մարդիկ կեղծ ու անտարբեր:

Ես ասում եմ՝ կարկատան է,
Կարկատան է—ամեն բան,
Նոյն իսկ կեանքը կարկատան է
Հօրից-որդուն յախտեան:

Խնք

Ա Ջ Ա Տ Ա Մ Ի Տ Ը

Բաւական է, այլևս ես համբերել չեմ կարող, թէկուզ ինձ ուղարկեն կամչատկա:

Այլևս ոյժ չունեմ տանելու այն ամենը, ինչ իմ շուրջը կատարւում է: Այո, պարո- նայք, մենք շատ լոցեցիք, բաւական է վեր- ջապէս, համբերութեան բաժակը լցել է:

Մենք պիտի այժմ ազդեցիկ և բարձր ձայնով խօսենք: Թող նզովեալ լինի այն ամենը, ինչ որ մեզ խոչընդոտ կհանդիսա- նայ. նեղ ոտնամաններն ու օձիքները և խօնջաները:

Բաւական է:

Փոքր ազատութիւն խեղճերին ու տան- ջլած հայրենիքին:

Մենք վաղուց է կուրօքէն հետևում ենք նեխած արեւմտեան Եւրոպայի բոլոր ան- միտ ձևականութեանց, որպէսզի գոնէ այժմ մենք կարողանանք կանգնել մեր սեփական ոտքերի վրայ:

Ահա թէ ինչու ես մաքուր խղճով և բար- ձրաձայն գոռում եմ ամենուրէք՝

—Թող կորչի արսուիտիզմը:


Եւ ինչու, իսկապէս, իմ կիներ, մեր տանը պիտի հրամաններ արձակէ և բոլորին կա- ուովարէ, քանի որ ես ինքս աշխատում եմ իմ ընտանիքը պահելու համար:

Երեկ կիսս բարկացաւ և ծաղկամանը զլիս փշրեց, որովհետև, ես նրա համար նոր գլխարկ չեմ գնել: Շատ լաւ:

Ստրուկութեան օրերը անդառնալի են և նրանց անհետ կորչելու ժամանակը արդէն հասել է: Բովանդակ մարդկութիւնը կարող է պաշտպանել:

Ես հաւատացած եմ, որ իմ այս հակա- կառավարչական ճառի համար, կարող են





ինձ աքսորել այնտեղ, ուր հէնց ինքը նախ-
րապան Մուկուչը իր նախիրը չէր համար-
ձակելի տանել արածացնելու: Թող ես տու-
ժեմ, այդ ինձ համար միևնոյն է: Ես հայ-
րենիքի սիրոյս համար պատրաստ եմ նոյն
խսկ սառը վաննա ընդունել: Թէկուզ ինձ
սպանեն էլ, ես անկարող եմ դաւաճանել
իմ ազատամտական խորաթափանց հա-
յիացքներին:

Քիճա-Պոստա

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԵՐԵՆԻ

Իմ ջուրձարձկ.

Յիշէր մեր անցեալ վաղանցուկ սիրոյ
մայիսը և մեր սիրոյ հեծկտուն օգտանե-
րը, որ երգում էինք մենք տենդային տակ-
տերով, առանց որևէ պտուղա ընդունելու:
Յիշէր... մեր պիանո համբոյնների ժա-
մանակ թուում էր մեզ Ֆէրմատոյի սապա-
տը, իսկ մեր բանաստեղծական զգացում-
ները համայնացնում էր կոր լէգատօն և
մենք արհամարհելով բէմօլը, ձգտում էինք
դէպ դիէզ... դէպ չքնաղ Ֆէրմատայի գո-
գը...

Յիշէր այն սրբազան ըրպէները, երբ
մենք ձեր կախարդ ծաղկանոցում, որպէս
երկնային քնարի շաղկապիտուն լարեր,
շնչում էինք—ես լարգօ, դու աղագիօ...

Յիշէր և այն սուկալի գիշերը, յիշէր քո
ծնողների քնքոյշ ու շարխնդաց սօպրա-
նօյի և բիրտ բասի դայրոյթը, որոնցից ա-
ռաջինը՝ սուկալի համարեց մեր տանջած
սրտերի ակկորդները, իսկ երկրորդը՝ դուրս
վազեց ինձ ծաղկանոցից...

Օ, որպիսի դիւ-գարմօնիա, մենք հեկե-
կացինք պրէստօ...

Այժմ ես թերի ստիկատօն գանգիս մէջ,
իջնում եմ դէպ դօ-բէմօլը, իբրև մի մեռած
ու մուշը բեպրիզ, որին դու այլևս չես
հասնելու երբէք օ իմ կորած բէլ-կանտօ...

Չեմ մոռանում ասել, որ արդէն թաղեցի
զաւակիս, այսինքն վաճառեցի հարմօնիկս,
որը հեկեկում էր աւերած սրտիս հետ ներ-
դաշնակ—այդ բանին առիթ տեց ստամոք-
սիս պիչիկատօն:

Քո լարազուրկ՝ Թաւ-Ջուրթակ:

Մարիկ

ՊԻՏԻ ԽՄԵՄ ՎՈՒՐ ՏՐԱԸՆԻՔ

Հէնց մէ գլուխ էս ին ասում, թէ ինչի իս
էդքան կօնծում, կօսէ, վրացի պատուաւոր
բաղքի կիկօլիկաշվիլի կնիազ Դանդուրը
բաղքի ջանի քինթ վուր գուս կու գցէր,
հէնց էս իր ասում:

—Բիճօ, բա գասմէվս դվիսօս:

Վա հէնց ինձ տեհաք, հէնց իս իմ խը-
մում. վուր խմում իմ, հալբաթ միդէզ էլ
ուշիմ:

Ասում իք թէ ինչի իմ խմում:

Վա, հէր օխնածներ, արա վունց չխմիմ
եփուր եարմուկէմէն անցնելիս աչքս ծա-

կում է դասար Շաքոյի սուկին, եփուր
մտիկ իմ տալի մի աչքանի Գէօյի ձուկին,
փուրս հուպ ա տալիս բուկին, բա պամի-
զօրի վաշ-վաշը, Իբրահիմի լաւաշը խուլ,
Ստեպկօյի մօթալը, Չաթանի տղի ցօցխա-
լը. բա էս շուշա-շուշա խիարը, Օրթաճա-
լու քօնդարը, մէ խօսկով արքայութենի
դուրը բացում է ու նիքսիվ իմ գնում:

Հարցնում իք «վիւրդի»:

Ասում իմ—«Թաթար վանօյի դուքանը»:

Ասուն իք եարմուկով մի անցնի էլի:

Լաւ, ախպրտիք, էլ չիմ անցնի:

* *

Գնում իմ բազաղխանովը:

Էլի էս ին ասում թէ ինչի իս խմում:

Տօ անիրաւնիր վունց չխմեմ, եփուր
վուտս դիպչում է թէ չէ դադազ Լօքօ-Ղա-
պի դուքնի կողքին վուր բազազ կայ, մինձ
սև քարին, մէ քանի ջէր տարին, պուպուզ
առչիւս ցցում ին մէկ միր Պաճօ Սօլօմա-
նը և իրկրուրդ միր կակօն, իրրուրդ լօթի
Բէժանը Սքէլ-Կակօէնց Նիկօն, մէխութէ
Եաւա-Օսէփը, Նալչազարենց Պապուչը, Հա-
ցափուրէնց Կօստօն, բազաղի տղայ Չա-
քուչը:

Էսթաւուր օսկի համսոննիր ճարի ու մի
խմի:

Էլ հարցուփուրձ չինք անում, մէ-մէկ
գլուխնիրս շուս ինք տալիս ու Չաքուչի
տղի փուրովը լիք ստօլի առչիւէմէն անց-
նելիս Պօսրովի քարվանսալի տակի պաղվալն
ինք գնում. էլ վունչ կախէթի ինք հարց-
նում, վունչ էլ Ռատանինը, Քուրդամիրի
ու էրիվանի գինին ևօ բօղազներումս մէ
գլուխ փէչեր է վուր վաւում ին: Աբա հի-
մի էտտի տիս մարտի դօշին, վուր ամեն-
քիս էլ բերում է խօշին, բա Լեանդ Վանօյի
բոնած գոճան, բա Տօպրուճանենց Փօփօյի
տղի Սաքուլի իփած ջիգար-միգարը, վահ-
վահ-վահ, արա վունց չխմիմ:

Քիզ ով է ասում, վուր բազաղխանովը
ման գաս,

Լաւ, ախպէր, չխմողը Շէյթան բազարովը
պիտի ման գայ:

Հա, այ լիզիդ շաքար, խելուք խօսկ ա-
սիր, ասում ինձ ու իս էլ մէ գլուխ Շէյ-
թան-բազարով իմ ման գալիս. դուն մի
ասի, լաւ լօթէքանց տիղը Շէյթան բազարն
է: Առչի օրը վուտս վուր դրի, մէկ էլ ինչ
տեհնիմ, առչիւս տնկվիցին իմ վաղուցայ
ճանանչիւրը էլ Բերինով, էլ Ռօտինով, էլ
Չիթախով, էլ Մանթաշով, Աղէլխանով, Ա-
միրխանով, Ալիխանով, Դօլուխանով, Ու-
լուխանով, Սարուխանով, Բաբախանով, Է-
ֆինջիան, Բոգարջիան, էլ աքցիղնի, էլ ա-
փիցէր, էլ գիմնազիտս, էլ բրանդմէստէր,
ու դիփունսնք լաւ լազաթին հաւաքելով
Ռահիմի մօտ, թամաշա էին անում քա-
բարին: Գինին բլօմա, սինով էլ փլաւ,
փուրս բացեց, բանս չխաւ, «կամպանիսս
գաւումարջօս» ասի մտայ Ռահիմի մօղ ու
կօնծեցի վունց վուր զակոնը գրած է: Հես-
տի էի դառի վունց վուր Սարուխանի
ուումբի:

Վա գանա էլ կունծու—մունծու, կայօր
վուր չխմին, վուր դիփ ինձ իք ասում, թէ
ինչի իս խմում: Մէ աէրօպանտի մուրդի
նղիի մօղ զրկէք էնդի էլ ոււմբիները գինի
ին խմում, բա ես վունց չխմիմ, հա:

Վուր տրաքէիք, պիտի խմիմ:

Ջազլագօ

* *

Ես նրան տեսայ...—

Սիրտս բաց արի ու սէր խնդրեցի,
Եւ նա ինձ տրեց իր սիրտը քնքոյշ:
Պայծառ ու զարթ կեանքս ձօնեցի
Նրա ծաղկավառ կեանքին սիրայիւշ...

Նա աչքէս թաւաւ...—

Տարիներ անցան ու լուր չկար ինձ.
Սիրտս կարօտած նրան էր ուզում...
Բա՛յց... էլ չէր սիրում... ու մեր սէրը
Չինջ
Քակտեց անգութը անիծեալ երկրում...

Էլ ես չտեսայ...—

Եւ գարուն կեանքս, որը ձօնեցի
Նրա ծաղիկ կեանքին.—թատամեցաւ,
Ինչպէս տերեւ աշնան ծառերի,
Ու սեւ կակիծը սրբտիս բուն դրրաւ...
Նարգիզ



ՄՕՏԱՒՈՐԱՊԷՍ ԱՅՍՊԷՍ Է ԼԻՆՈՒՄ

(Փնիլետօն—արօակ բանաստեղծութիւն—մինիատիւրա)

—

Անտանելի շոգերը երկարում են, ինչպէս
Մոսկուայի ինտենդանտների դատը: Ամա-
րանոցի պատաշաւքները ձանձրալի են, ինչ-
պէս «Հորիզոնի» էջերը:

Մարիամ Ստեփանեանը գեղեցիկ է՝ աչ-
քերը կրակոտ, Մակեդոնիայի հարցից էլ
աւելի, ծոյլ-ծոյլ լսում է թուլթակին, ինչ-
պէս գիւղատնտես դասախօսներին:

—Թութակ, ասա, յիմար:

—Յիմար:

Թութակը ձանձրացրեց, ինչպէս վերաս-
տուգութիւնների (րեվիզիանների) հաշու-
տուութիւնները:

Լաւ է ոչինչ չլսել ու չտեսնել, ինչպէս
պրիմիէր-մինիստրը, լաւ է գրօնել այգի-
ներում, ինչպէս սահմանադիր երկրներում,
մոռանալով, թէ ինչպէս ամուսինը դաւա-
ճանում է իր կնոջը:

Կանայք, որոնք նման են հայ խելօքնե-
րին և այնքան յիմար են:

Ի դէպ, ինչո՞ւ համար են ընտանեկան
սրբութիւնների օրէնքները.—էջմիածնեան
սինօգականներն անգամ անկարող են այդ
բաները վարելու:


Կարող է պատահել անտառում մի երի-
տասարդ ուժեղ, ինչպէս Գերմանիան, հե-
տաքքեր, ինչպէս ալբանացիները:



— Բերեք, էլի, սպանում էք ինձ քաղցած:

Ո՞Վ Է Ս Ա





Օղակներն կարող է մտնել այդ օրիորդի դատարկ սիրտը, ինչպէս Ատրպետը նպաստամատոյցի հաշիւներում:

Լու է, չէ: Բայց նա անհնարին է, ինչպէս գիւղացու տենչանքը՝ նոր բերքեր ստանալու հարցում:

Իսկ շողերն աւելի անտանելի են՝ քան կաթողիկոսական հարցով զբաղուելը:

—Տիկին Մարիամ, ճաշը պատրաստ է: Հաստափոր աղախինը, կանգնել էր տիկնոջ առջև, ինչպէս անհետաքրքիր շարաթը:

—Տիրուհի, սառել են կերակուրները: —Տիկին Մարիամը համոզւած է, որ ամեն բան կարող է սառել՝ նոյն իսկ հոգու յոյզը, սէրը դէպի ամուսինը, և հայկական ամեն մի հեռաւոր ձգտում:

—Տիրուհին գնաց ճաշելու:

Անդէր

Առաջնակարգ խոշորացուց

Բժիշկը (խոշորացուցի տակ դնելով մի ինչ որ միկրոսկոպ)։—Ափսոս, արքան չի մեծացնում, որ հնար լինէր որոշել միկրոսկոպի ուր տեսակին է պատկանում:

Մայրը։—Տէ՛ք՝ տանեմ կնոջս մօտ, նա լից ուխտ է շինուած:

Հիւրանոցի սիրուհին։—Պ. գնդապետ, դուք ինչ բանի հետ էք սիրում տօբանս:

Հիւրը։—Քեզ ցնցիկ կանանց հետ, չքննող տերուհիս:

Լիլիպուսի

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՀՏՊԻՏ ԺՆՈՒՆԴ ԽՆԹՆԵՐԱՆՆԵՐ

ՄԵՆՆՄԵՆՆԵՐ ՕՐԵՊԵՆՆԵՐ Ժ Ա Ղ Բ Ը Թ Ե Ի Թ Ո Ւ Կ № 1.

ԱՌԱՋԵՈՐԴՈՂ.

Հիւսիսափայլը՝ ծնաւ Արծիւ Վասպուրականի, Արծիւը՝ ծնաւ Մասեաց Աղանի, Աղանին՝ ծնաւ Կոռնիկ հայոց աշխարհի, Կոռնիկը՝ ծնաւ Մշակ, որ վերջը եղաւ բերշակ... և ի մէջ ամայացեալ զբական հրապարակի—ի ոչնչէ յայտնեց սատիրան հայկական ու ծնաւ Դասպար Կալատուզեան, Կալատուզեանը՝ ծնաւ «Մաթաբալա» և «Մաթաբալան» էլ ծնաւ Հոպիտ (ПАЯИЦЬ), որ այսօրուանից ծիծաղում է իր մօր ծոցից—դառն ծիծաղով:

«Հոպիտ»-ի նպատակն է—խելքեր մտղել, սրտեր դաղել ու խելացի խենթի նըման ծիծաղել ու ծիծաղել թունաւորած ծիծաղով:

Մեր հիւանդոտ իրականութեան մէջ տեղի ունեցող ամեն ազեղ ու յուր դէպքերը

Պ Ա Ր Ո Վ Ա Կ Ի Ր

Կարօտած Բեսապար դահլու

Դայի ջան, էս ա կիւնի մի երկու շափաթ, աման օր հնց էնա օգուումը դաւամը ծեռս օնիմ մի պեան կիրիմ—էն սնաթէն գուբինըմ կտրում, դաւամը ծեռքիս չուռանում, փեթ ա դանում, գիղում չըմ էնչան ա: Ամա էս քեր մին թահրան կլիէս գօր տէ՛ թա ինչ ա ային-օյին էլա հասցրած ինիմ, որ իմանաս Թիփլիզան սաւայ էլ լուսաւորած աշխարք կայ: Դայի, խօսկը մերը, մօնը մերը, կիրող չափած կիրածս մի մարիփաթին դատ չի, ամա դէ Ասուած կիրած համարի. մարթ չելած տեղը մուք էլ մարթընք: Հինչ անիմ, դայի, իմ ապէր, որ ուրիշներու ֆիան կրթելու տւած ինար ինձ, մհենգ ես էլ կիրափար կիրել կըգիդայի, այ հախմի... մեղայ Ասծու, էլնա հինչքան չինի իմ ապէր ա մեղայ Ասծու... ինչ արած հաբաթ ձկափա կիրսա:

Դայի, զորթ ա ես կրթեցած չըմ, ամա դէ ծանօթնես լաւըն. մինը համարեա թա դերասան ա, բեազի-բեազ էլ բխերը թրաշումա, անըմը տամ չըմ, կընեղանայ, առանց էն էլ շոքերը շատըն գօր: Մի օրիշն էլ կայ, որ Մոռուանց Աղասի կասին շատ փահմաւ տղայ ա, մին-մին պեանաստեղծութին ա կիրում: Իտի մին քանի բանըըրանգ ծանօթնեն օնիմ, արալըղումը ես ըմ բէքեարան:

Ամէսը-երկու ամէսը՝ մին նհետ թիատրոնընք խաղում, էս երկու օրս էլ էլնա թիատրոն օնինք. Թիփլիզան յայտնի դի-

ծաղրել, մեր շաշ ու անտաշ հերոսների բուրգը գղել, քթներիցը քացախ մըզել և այդ կերպ զըզել...

Այդ դեռ քիչ է. Հոպիտը պատժում է զլիաւորապէս իր հօր պըշի թափով, որով մելանի հակայական ցայտունները, ծաղրի անշինջ նշանն են գրոշմում տխրահոչակ հերոսների ձակտին:

Պատիւ ունիմ ծանօթանալու... Հոպիտը հէնց ես եմ, իսկ թէ ես ո՞վ եմ, այդ էլ երևի մայրս կիմանայ...

—Ահա թափահարում եմ ինձ և խուլ զընգզընգող բոժոժներին աղմուկի տակ, առաջին ամենանւիրական պարտականութեամբ, արշինանոց պըշիս ծայրից, մելանի ցայտուններ-եմ շարտում (թէ և մելանն էլ ափսոս է) դէպի Ռուսաստանի պառլամենտի ամենապակաւնած մարդը, քաղաքական ամենավարպետ պոռնիկը, ինտելիգենտ ուսանների նախատինքը—միմոս Պուրիշկեիչը:

—Յետոյ, դէպի Ստ. Մալխասեանը—որ իր «վ»-ով մեր Ղաղարոս Աղայեանի սիրտը ճաքեցրեց: Այժմ մայրենի լեզու խանդոտ սիրահար ծելուծին էլ չկայ... Դէ թող հիմա «վ»-ն էլ աչքը կոխի, «ւ»-ն էլ:

—Յետոյ, դէպի Հայ Դրամատիկ. ընկ. վարչութիւնը—որ ինչ թոկից փախած թերուսների, տիրացունների, սալգատուզկա

բասան ա եկալ, գիղում չըմ անուսնա Մասնութուր, թա փամիլը. ամա շղթափումից ջուար ա ըրէվում, սաբմն դրա ֆիան դիրասան թորաթա ճարբի. սաբմն մին խաղմա—մին խաղմա, որ թեմաուղ արմացք-զարմացք պեան ա: էս շարթէս «Պէպոյա» խաղում մեր դեստան էլ մասնակցութին օնի, ըզրա մասին հետաւ կըլսիս:

Մտադիր ընք մին էրկու ներկայացումից ետաւ խուներ կազմինք՝ ներկայացումներ տալով քնեանք՝ Պետրբուրք, Պարսկաստան, Բաքի ու Թեմերիան Շուբան թխելա նինք զաղըանիցա, Մանթուրին էլ նսքաշ կըտանք: Կարքին մարիֆաթին դերասանաւաչի երես-մերեսնես կըթրաշինք, դիւշմանի աջըղու մին քու ուզած պետմա կլէկէինք, որ մաննավ նշանց տալու տերնանք. քաշպորտներես մեհնալ կըկիրինք մեծ-մեծ տիպովի տերբավ «Դերասանական խումբի պատուաւոր անդամ» որ չասին պատու դերասաններըն լիւս աշխար եկալ: Անգուճը կանչի Դօն-Աբրահամեանին մընան, որ հիշտեղ քնեանք թակ ու մահակավ տիւս անին, էդ մեր դաւթարան տիւս ա: Դայի կլիթղ շատ ցըցըրի, աւել պակասը ների, ոքեուրած ըմ:

Տուրնէ տիւս կեալիս խարար կանիմ: Կարօտաւ պարեմ կանիմ խըխոցը...

Մնամ քեզ կարօտ քուր տղայ՝ Ղրխանանց Դիւրջուն Թորք Արմենակ 1911 ամի ի քաղաքն Ալէքսանթրապոլ:



գօկերի, ինչ քուչանների կուպիտ ու մուխամազ ասոցների ուղում էք, բերում է—հիւրընկալում հայ բեմի վրայ, մէկին շինում է տաղանդ, միւսին կաղամբ, մէկին բեզանեօր, միւսին բեթիսսօր, և... և ի՞նչ... մենք էլ գնանք փող տանք ու զրանց նայենք... Է պարապ բաներ են:

—Յետոյ, դէպի հայ полудѣва-ները, որոնք մի գեղեցիկ արտիստի անուն լսելիս, առանց տեսնելու իսկոյն սիրահարում են և ուղում են ձանկն ընկնել... քրտնում են, բերանների ջուրը գնում է և դեռ մի բան էլ աւելի... էլ չեն մտածում թէ այդ ողորմելի դերասանը, որ իր սննդաղբաֆն ու երեսը սափրելու կոպէկները հազիւ է ձեռք բերում, ինչպէս պիտի հաց ուտեցնի իրանց, կամ կատի ձագի նման քաղաքից քաղաք քարշ տալով յանուն էստետիկայի—ի՞նչ էստետիկ հաճոյք պիտի պատճառի իրանց...

—Յետոյ, դէպի հայ ուս, վրացի, մըլթօն և այլ ազգերի պարբերական հրատարակութիւնների տնօրէնները, որոնք կոխկըռտում են իրանց զբօշակը, տեղ տալով Վարշաւայի ու ջնուգների խաբեբայական յայտարարութիւններին, որովհետև Метцел-ից կամ հէնց Փիրմաներից չաղ-չաղ վճարներ են ստանում—սուտն ու կեղծիքը տարածելու համար... Է՛, ես սղայաբար



անուամբ, համա ինչքան չլի մատերիալի փող տեղ եմ, չէ:

—Տներ, դէղի ջան, թէ չէ ինքս տեղահան կանեմ:

—Սատանան էլ գլուխ չի հանի այս բանից,—վրդովեց դատաւորը:—Եւ տեսէք, Աստուծո սիրոյն, սրանք չափահաս լուրջ մարդիկ են... Ինչնեքիդ է պէտք այդ ողորմելի խնայողքը:

—Հարկաւոր են, հոճոաց փեսացուն:—Շատ կարելի ա, որ ինքս բանացնեմ, ո՞վ գիտա:

—Բա չէ որ խնայողքը չափսով են շինուում... Ինչնեքիդ է պէտք ախար, է...

—Է՛յ, լիրփ,—ասաց պառուը՝ վառարանի պէս տաքանալով:—Իրա բերանը ախտէքնեքով լիքն է ու ինչպէս պառու կնկամէն կի ուզում է վերջի ախտէքնիւն էլ խլի... Արա Աստուծ դարուը կօնէ:

—Հիմիկայ տղամարդիկը շատ են լրբացել ու շատ էլ գաղաղելը,—հեգնաբար ծիծաղեց Ռիմսոն ու իր նշանածի ձեռքով ծնկներին զարկեց:—Ուզում են որ ուղղակի կնկայ բերանը մանեն:

—Դէղի ջան, դէ հերիք եղաւ, ինչ որ իմ աստմներով վայելչանք ու լազաթ ստացարքեղ համար հիմի էլ ուրիշը զակազ տուր. դուս տուր, դուս տուր, ասում եմ:

Պառուը տեղից վեր կացաւ, խնայողքը հանեց, շարտեց փեսայի ուրիւն, ու նորից իր տեղը նստեց, մոռուած, ամբողջ աշխարհը արհամարհանքի ու անէծքի արժանացնող դէմք արած:

Սեղծ պառուի բերանը խորն ընկաւ,

թշերը ներս պրծան, ու երեսը կարծես պստիկցաւ:

—Հիմա հօ փոխանակեցիք,—ասաց հեղնաբար դատաւորը:—Վերջապէս, յոյս կայ, որ դործը կարող եմ դադարեցնել, այնպէս չէ:

Այս բանը լսելով, պառուը վեր թռաւ տեղից, թեկը թափահարեց կրակ կտրած ու հաւին կատարի հետևող աքաղաղի պէս, ու սկսեց բռբռացնել, իր պառուական ճմշկած պոռոչները բաց ու փռուի անելով:

—Տպու... կու...:

—Ի՞նչ է,—հարցրեց դատաւորը:

—Պոռու... Մմղ...:

—Երեկ ուզում էք որեւէ բան յայտնել: Հըմ... ներողութիւն, այդ բանը մենք հիմա ի կատար կածենք: Պարոն Սափարեանց, խնայողք մի ըստէ բան տէք սրան: Նա կասէ, ինչ հարկաւոր է, և կրկին կը վերադարձնէ:

—Սա ի՞նչ պիտի ասի որ... շատ-շատ՝ մի սարսաղ բան, պարոն սուղիա: Չարժէ տալ:

—Սաֆարեանց, ես նկատում եմ, որ դուք անսիրտ մարդ էք... Չէ որ իսկոյն վերադարձնելու են...

—Այո, վերադարձնելու են... Ախր բանը դրանումը չէ... բանը նրանումն ա, որ իմ խնայողքով ինձ վրայ լաւ բան չի խօսալու, ափեղցփեղ դուրս ա տալու, մի զգեիլ բան ա ասելու, ուրիշ ի՞նչ... Դէ, ասա տեսնամ, պարոն սուղիա, արժէ էղպէս բանի համար դրան խնայողք բան տամ...

Այսպէս թէ այնպէս, այնքան բարի

գտնեց, որ խնայողքը պառուին լսանալուց Պառուան այն սարքեց լըրիքէն իր արջկան:

—Աղչի Ռիմսո, դուն էն օսկէ մեղալիօնը յիդ ուղեցիք, թէ չէ: Էն սրտի պէս վուր շինած է... Յիդ ուղիւր... գանա արժանի է, վուր քու յիշատակը էս լրփի կուշտն ըլլէ...

—Ճիշտ որ... ան,—չիտթւած դիմեց Սափարեանցին Ռիմսոն. գլխիցս բոլորովին թռել էր... մոռացել էի... Տէք իսկոյն իմ մեղալիօնը իմ ընծայած այն օսկէ սրտիկը: Տեսէք, ինքը ձայն չի հանում, ինչպէս սուս է կացել:

—Ես ձեզ չասի, պարոն սուղիա, որ սա մի խելօք բան չի ասելու... էղպէս էլ գիտէի—մի օյինբազ բան էր սարքելու: Էն էլ իմ խնայողքով... Տեսար, պարոն սուղիա, ծերունը դիմի իմանում ա, զահրումարը թամամ իմաստուն ա, իմաստուն...:

Նա շղթայիցը պոկեց բրելօկը—Ռիմսոյի նւիրած «օսկէ սրտիկը»,—գցեց սեղանի վրայ, ու իր միակ ձեռքով իր կողքին յենւած, մօտեցաւ իր կնացուին:

—Շլապը, շուս:

—Ահ, որքան ուզում ես: Ափսոսում եմ մինչև անգամ, որ այսպիսի զերբիլը գլխիս ման եմ ամել: Մի անպէտք բաղչա ու բոստան է, ուրիշ ոչինչ: Նա, դէր գլխիդ:

Դատաւորը զահլան գնացած, բռնեց իր քունքերը, գլուխը տարուբերեց ու ափաշկարա զզւանքով ասաց.

—Կարող էք գնալ:

—Շատ ու շատ շնորհակալ ենք, պարոն

է՛ Մանէլ, Մանէլ, ինչ ես կորցրել ինչի յետից ես ընկել...

Մեղայ քեղ Տէր Ասուած... Կրեմենչուկում մի կօշկակար տղամարդ յղիացել է, իսկ Կամինեցի սպանդանոցում մի կով՝ ծնել է մարդ-արարած: Մեղայ, մեղայ...

«Koen. Hartungsche Zeitung»-ի ասելով վրիհեմ կայսրը աղիւսագործ է դարձել:

Լ Ո Ւ Ր Ե Ր

Յամառ լուրեր են պատուում թէ՛ խօլերան յարութիւն առնելով, ընկերակցել է չուսայի, սև ծաղկի, ցինգայի և այլ խոշոշող ոգիների հետ ու արշաւում է մեր կողմերը:

Պաստր վրոյրը շարունակում է դեռ ևս լուսնահաչ տալ Կէկէլների շրջանում իր բարեբարների վրայ:

«Սաֆարայայի» երկասէր աշխատակից Մարիկը, վերջերս, Թիֆլիսում հիւր եղած ժամանակ անչափ քէֆ անելու պատճառով, զրկեց «սև ազուալի» ազամանդազարդ շքանշանից և վերստին աքսորեց Գիւլաքարակ:

ԹՂԹԱՎՅՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Փամբակ.—Այս տարի մեր գիւղականները մնացել են թակարդն ընկած մկների նման կուչ եկած. կարկուտը իսպառ ծած-

կեց դաշտը, անասունների համար կեր չկայ... ծերերը պատմում են այսպիսի տարի երբէք տեսած չեն:

Բորչալի.—Անցեալ գիշեր շաղկամեցի Դանդանեանը—կրակեց իր հարևան Ջանջանեանի խոտի դէղերը և կտրատեց մինչև 100 պտղատու ծառեր. պատճառը անձնական թշնամութիւնն է. շաղկամեցիք՝ որոնք ամենքն էլ փող են պարտ վաշխառու Դանդանեանին, մի համախօսականով դիմեցին իշխանութեանը—խնդրելով չպատժել յանցաւորին:

Զիզիլակեանց

Լոռի.—Մեր կողմը սովորութիւն է դարձել ամուսնուց փախչելը. վտանգը լուրջ է. հարկաւոր են մի քանի ականջ կտրող դաւլաքներ կլեկած հարսների համար և գթութեան քոյրեր բոգатый муж-երի համար: Ծերերը պատմում են՝ որ այսպիսի բաներ երբէք տեսած չեն:

Չիրակ.

Շիրակ.—Այստեղ խիստ առատ հունձ են անում կարկուտ կապող և զրբաց տիրացուները, մաղ պտտող տէրտէրները, սէրի գիւր անող տացուները և սատանայ բռնող մօլլաները... Ժողովուրդը խարխափում է խաւարի մէջ... հեր է վերջապէս մեր ինտելիգենցիան:

Չանգեզուր.—Երեկ, լուսաբացին գիւղա-

կան զրազիր ժամաժեանը, քօս մանգաղով մորթեց իր կնոջը և նրա սիրահար Մաժմաժեանին. պատճառները և անյայտ են և յայտնի: Ոճրազործը ուղարկւած է էջի բաղանիք. պատմում են՝ որ այսպիսի գազանութիւն երբէք տեսած չեն:

Լուլլաքարաբեանց

Ղաղախ.—Երեկ գիշեր, թիֆլիսեցի մի այրի տէրտէր՝ փախցրեց մեր հայրենակցուհի մի կար անող կնոջ—գեղեցիկ անուսով. միջոցներ են ձեռք առնւած գտնելու և երկուսին էլ պատժելու. Լինչի օրէնքով: Այսպիսի բան հօ ամենևի լսած չեն ծերերը:

ԹԱՏԲՈՆ ԵՒ ԳԵՂԱՐՆԱՍ

—Անցեալ շաբթին ուրարակի կիսագերասաններ՝ Ափրիամ և Շահին, իրանց Մաթօների հետ, ներկայացրին «Չարբազան» դրամա 12 գործողութեամբ, հեղինակութիւն լեզւածու վրոյրի. զերասանները—որոնք քիչ միչ հայերէն գիւր գիտէին, ստացան նւերներ և ծափ ու դափեր...

Ամսոյս 0-ին տիրացու դերասան՝ Փրեանը ներկայացրեց «Չարախան» տրագիկոմեդիա 24 գործողութեամբ, հեղինակութիւն Ասքանազ Բիմուրազեանի. դահլիճը



— Զուռնա փչինք, թմբուկ զարկենք, գուցէ զործունեսայ անուն հանենք:



Սպաններ մեզ են նայում.
Մայրուն հո՛ չենք.



Բժշկի առանձնասենեակում

— Դ՛ն... ձեր թորերը բաւական վնասւած են:
— Մի՛թէ...
— Այո՛ այո՛, ձեր առհմում թորախտից ոչ ոք չէ՛
մեռել:
— Ինչպէս չէ. իմ հօր հօրաքրոջ որդու հօրեղբոր
աղի աներոջ հարսը թորախտից մեռաւ:
— Ահա՛, ասացի՛ ձեզ է՛, թէև ձեր կազմածքը
բաւական առողջ տեսք ունէ՛, իսկ առհմականը կայ,
անշուշտ կայ, դուք պէտք է ուշադիր բժշկուէք:



—Գիտէ՞ք, մանկանս ես ինքս եմ կերակրում։